

գործնալ տարուէ տարի, որոնցմով երկ-
րին վիճակը բաւականաւ համար մեծա-
մեծ շինութիւններ և բարեկարգու-
թիւններ կրնայ կատարուիլ, և որոնց
չի կրնալ կատարուելու համար կայսե-
րական կառավարութիւնը կը մեղադ-
րեն:

Այսինքն ըսել կ'ըլլայ, թէ երբոր
կ'ուզեն որ մէկը քալէ, անոր ստիպելը
կապելու է մի:

Երբորդ, խղճմանքի տէր մարդը
կը մտածէ, որ երբ մաքսանենգութիւ-
նը տարուէ տարի ասանկ մեծ գումար
կը գործնայ, հարկաւ անյաղթելի առա-
ւելութիւն մը կ'ունենայ համեմատ վա-
ճառականաց վրայ: Տեսանք վերը, որ
աֆաբայի պատճառանք մաքսանենգու-
թիւնը կրնայ կոր հարկերին երկուք, երեք,
հինգ գործնալ տէրութեան գանձէն: Արդ՝
մաքսանենգը այս տուրքե-
րուն սրն որ վաստակի, իր առուստու-
րը համեմատ վաճառականներուն նայե-
լով, աւելի յաջող վիճակի մէջ կ'ըլլայ:
Կարող է՝ հարկերին երկուք, երեք,
հինգ վար գնով ծախել իր ապրանք-
ները և դիւրութեամբ քնէլ, երբոր
համեմատ վաճառականը կը պարտաւորի
իրենները պահելու: Առաջինը կը հա-
րուստանայ, երկրորդը կը կործանի, և
այս տեսակ գործողութիւնները խիստ
շատ են:

Այլեւս աւելի անհամեմատ, անիրաւ,
արգարութեան և ուղղութեան հա-
կառակ ինչ կրնայ ըլլալ: Աններէն է,
որ ուղղութիւնը ամեն տեսակ դժ-
բաղդութեանց ենթակայ ըլլայ, և
անեղութիւնը, խարդախութիւնը և ա-
նիրաւութիւնը յաջողութեան ամեն
դուռները բաց ունենան իրենց առ-
ջեւ: Ահա ասոր համար է, որ կայսե-
րական կառավարութիւնը համեմատ վա-
ճառականաց խղճմանքը և համու-
թիւնը օգնութեան կանչելով, կ'ուզէ
մաքսական նոր կարգադրութեամբ այս
գէշութիւններուն առաջքը առնել, և
իրաւունք ունի ուղղելու:

Ահա ասորի աֆաբայի վերաբերեալ
նոր կարգադրութեան յօդուածները:

«Ամեն վաճառական, երբոր աֆ-
աբայի ապրանք գայ իրեն, 24 ժամու
մէջ զանոնք մաքսին յայտնէ ինչ կեր-
պով որ սահմանուած է, և անոնց եր-
թալու տեղը ցուցնէ, ամենքն ալ
զատ սոււմարի մը վրայ նշանակած, որ
ապրանքներուն գնել վերցունենէրը
գիւրանան:

«Ապրանքներուն նաւէն դուրս
հանուելը, ցամաքը մնալը և նորէն նաւ
դուրսը առանց հրամանի և առանց
մաքսի տեսուչներուն ներկայութեանը
չի կրնայ ըլլալ:

«Առ Ժողովը գլխաւոր նաւահան
գիւտները երթալիք աֆաբայի ապրանք-
ները կը բռնեն, կատարեալ նշան դրուի
վրանին, և անոնց եկած նաւահան
գիւտներուն Ռուսի հիւպատոսէն վը-
կայական ունենան վերոյիշեալ յայտա-
րարութեանը համաձայն:

«Աֆաբայի ապրանք խրկող վաճա-
ռականները մինչեւ երեք ամիս, վկա-
յական մը բերեն Օսմանեան մաքսա-
տանց կառավարութեանը՝ Ռուսի մաք-
սատուներուն կամ քառասունօրեայ ըզ-
գուշարաններուն կողմէն, որ ան ապ-
րանքներուն իրենց տեղը հասած ըլլա-
լուն վկայէ, և այն վկայականը ապ-
րանքները խրկող վաճառականին ըրած
յայտարարութեան համաձայն ըլլայ:»

Այս միջոցները անշուշտ ազդեցու-
թիւն պիտի ունենան, բայց մաքսա-
նենգութիւնը բոլորովին վերացունե-
լենին ինչքանիս չի կտրուի: Եւ ու-
րովհետեւ մաքսանենգութեան վեր-
նալը մաքսատանց կառավարութեան
չափ համեմատ վաճառականաց ալ օգ-
տակար է, կը կարծենք, որ անոնց հա-
մարտահաճութեամբ միաբանութեամբ ու-
րիշ միջոցներ կը մտածուին վերոյիշ-

եաները կատարելագործելու համար:

Առաջարկեալ միջոցները աղէկ են,
բայց դեռ շատ բաց դուռներ կան,
ուսկից մաքսանենգութիւնը կրնայ անց-
նիլ ի միտ արքունի գանձուն և վա-
ճառականաց: Թէ Ռուսիոյ համար ըլ-
լայ և թէ Պարսկաստանի աւելի բան կայ
ընելիք: Եւ երբոր յանձնարարական
ժողովը գումարի այս նիւթին վրայ
խօսելու, հասուն քննութեամբ կը հա-
մոզուի, որ իրաւունք ունինք այս նոր
կարգադրութիւնը անկատար համա-
րելու: Պէտք է, որ մաքսանենգու-
թիւնը մեղացունելու դիտաւորութե-
ամբայ ելլուի, և թէ որ աւելի շատ
և բաղժազան միջոցներու կարգադ-
րութեամբ ալ բոլորովին չի յաջողի,
գնէ անոր գէշութեան արդիւնքը չաւ-
կը նուազի: Համեմատ և օրինաւոր չա-
հերը անիրաւութեան գէժ պաշտպա-
նելու համար՝ ով որ ձեռքէն եկածը
ընէ, իր պարտքը կատարած կ'ըլլայ,
բայց ընել պէտք է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂՂԻԱ: Մարտ 31 ին՝ Ռուսի Դի-
լիքի գերագատանին ստացուածքը գը-
րաւելու համար՝ Ռուսի յաբօլէոնի հա-
նած հրովարտակը գործի դրուել սկը-
սաւ: Տէրութեան ընչից վերադա-
շութեան պաշտօններէն մէկը քանի
մը հազար Նիւթի պալատը գնաց,
որ Ռուսի Դիլիքի ստացուածքն էր, և
տէրութեան անուամբ ուղղեց անոր
տիրել: Պալատին վերադաշութեան առաջ
բոլոր ըրաւ և ետքը գէժ կենալ ու-
ղեց դուռները չի բանալով:

Տէրութեան պաշտօնեայն պարտա-
ւորեցաւ գործին բերել տալու և
գումարներէն մէկ քանիսն կը պահէին
ու ծղկնիքները կտրելու: Այսինքն
գրեթէ բոլոր կրցան պալատին տիրել:

Իսկ վերադաշութեան, որ անխորհուրդ
և ծաղրական դիմակայութիւն մը ըրեր
էր տէրութեան կողմէն խրկուած պաշ-
տօնէին, դատաստանի պարտաւոր ե-
ղաւ:

— Ապրիլ 28 ին՝ Ռուսի յաբօլէոնի իշ-
խանը արծիւ նշան պիտի բաժնէ բա-
նակին, և այս պատճառով բանակին ալ
պատրաստութիւն կը տեսնայ ի պա-
տիւ իշխանին զինուորական մեծ հան-
գէս մը ընելու:

Փորովը և անոր շրջականները գրա-
նուով զօրաց բոլոր գումարները ամբողջ
ներկայ պիտի գտնուին: Վարդի գա-
ւառներուն գումարներն ալ իրենց կող-
մէն երեսփոխաններ պիտի խրկեն:

Անակ կ'ըսեն, որ այս չքեղ հանգե-
սին պատճառով Շահ տը մաւսի (Արեւ-
սի դաշտ) մէջ հարկեր հազարէն աւելի
զօր պիտի գումարի. հանդէսին ծախ-
քերը զօրաց սպայները պիտի հոգան,
ամեն մէկը իր երկու օրուան թոշակէն
հրաժարելով:

Վարդիայի լրագիր մը կ'ըսէ, թէ
Ռուսի յաբօլէոն այս հանդէսին մէջէն
կայսր դուրս չ'ելլայ նէ, յայտնի կը
հասկցուի, որ ինքը պիտի չուզէ յանձն
առնուլ:

— Պ. Պ. Միշլէ, Ի. Բինէ և Լոտան
Միքիլիւն որ Քօլէմ — ար — Վոստոի
գլխաւոր գատատուներէն են, կտտ ա-
վարութեան հրամանաւ այս պաշտօնէն
հանուեցան բոլորովին: Այս երեք ե-
րեւելի անձինքը իրենց քաղաքական
կարծիքներուն պաճառաւար արդէն գա-
ղարած էին գատատուութենէն, բայց
իրենց պաշտօնը ցկեանաւ ըլլալուն հա-
մար՝ անուանին գատատուաց կարգէն
չէր հանուած և իրենց տարեկան թո-
շակը կ'առնէին, սակայն ասկէց ետքը
ոչ անուանին պիտի մնայ գատատուաց
կարգին մէջ և ոչ թոշակ պիտի առ-
նեն:

ԱՆԳՂԻԱ: Բնորութեան պատ-
րաստութիւններ կ'ըլլան և ամեն ընտ-
րելիները մասնաւոր ժողովներու մէջ
ճառեր կը խօսին իրենց կարծիքնե-
րը և խորհրդարանին մէջ իրենց բըռ-
նելիք ընթացքը յայտնելու համար:

Անեկն աւելի նշանակութեան ար-
ժանի բանը սա է, որ ազատ վաճառ-
ականութեան սկզբանը գէժ ճանչ-
ցուած մարդիկները պարտաւորեալ են
իրենց կարծեաց յայտարարութեանը
մէջ խոտովանելու, որ դուրսէն եկած
արմտեաց վրայ սուրբ կապելու գիտա-
ւորութիւն չունին:

Այս յայտարարութիւնը ըրին նա-
եւ Լ օրտ Տէրպի և Պ. Կոլլարայի եր-
կու խորհրդարաններուն մէջ:

Այլից յայտնի կը տեսնուի, որ հին
պաշտպանողական դրութիւնը Անգլի-
ոյ մէջ նորէն հաստատելու անհնար ե-
ղած է:

ԱՒՍՏՐԻԱ: Պ. Պաք ներքին գոր-
ծոց պաշտօնեայն խորհրդայ նախագահ
անուանեցաւ Շուարցհայէրի իշխա-
նին տեղը: Պ. Պաք հանգուցեալ իշ-
խանին քաղաքական դրութեան ջերմ
կուսակիցներէն է, ուստի ասոր և
Պուօլ Շուարցհայի ընտրութիւնը կը
ցուցնէ, որ Վ. Կայսրը Շուարցհայ-
պէրի իշխանին ընթացքը շարունակե-
լու դիտաւորութիւն ունի:

ԻՏԱԼԻԱ: Թուրքանայի մէջ այս օ-
րերս նոր օրէնք մը հաստատուելու գի-
տաւորութիւն կայ, որով խորացեացի-
ները կարող պիտի չըլլան ասկէց ետքը
դատաստանական պաշտօններու հաս-
նիլ և բժշկութիւն ընելու:

Այս օրէնքը հաստատուելու համար
Թուրքանայի մեծ դուքսը Հոփլի կա-
ռավարութեանը խորհուրդ հարցուց,
և թէպէտ դեռ պատասխանը առնը-
ւած չէ, սակայն Դիօրէնայի մէջ ա-
մեն մարդ աներկմիտ դիտել տրուելիք
պատասխանին միտքը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— Անցեալ երկուշաբթի (ապրիլ
14)՝ Տրապիզոն նահանգին նախկին
ընդհանուր կառավարիչ Մեծապատիւ
Սամի փաշան (Օսմանեան Վախիթ-Սի-
մաքի) շոգենաւով Կ. Պօլիս հասաւ:
Այս բարձրաստիճան պաշտօնակալը,
թէպէտ քանի մը ամիս միայն Տրապի-
զոն կեցաւ, սակայն բաւական ժամա-
նակ ունեցաւ իր բարեխախտ ջանքը
հաստատամտութեանը, խոհեմութեան
և կառավարական հանձնարոյն շատ փոր-
ձերը ցուցունելու: Ուստի պաշտօնէն
մեկնելով իւր կառավարելոց արտին
մեծ ցաւ պատճառեց:

Չորեքշաբթի Ս. Սամի փաշան
բարձրագոյն դուռը այցելութեան գը-
նաց:

— Երեքշաբթի օրը (ապրիլ 16)
Ս. Վալիք փաշան Ս. Սամի փաշային
յաջորդը թափֆ ֆաէկաթով մայրաքա-
ղաքէս մեկնեցաւ Տրապիզոն երթալու
համար:

— Անցած երկուշաբթի (ապրիլ 14)
Վ. խոխի ծըլլա Վալիք Ֆէհմիլին՝ Վառ-
նայի շոգենաւով Կ. Պօլիս հասաւ:

— Կայսերական Դիշլէ — Պաշի շոգե-
նաւ ֆաէկաթով, որուն մէջ կը գրու-
նուի Մեծարդոյ Սիւլէյման պէյը, ամ-
այս 14 ին Սալթա հոտեր է, ուր 24
ժամ մաքրարանը կենալին ու ջուր է
ածուիլ պատրաստելէն ետքը, 5 ին
ճամբայ ելեր է թուրքուր երթալու,
ուր Ս. Սիւլէյման Պէյը պաշտօնիւ կը
խրկուի կայսերական կառավարութե-
ան կողմէն:

— Կիրակի օրը 20 ապրիլ Սեֆարդոյ
Սիւրբէ — Գաֆի Սիւլէյման Ֆէհմիլին իւ-
նա

կիւտար անցաւ, ուսկից ամսոյս 28 ին
ճամբայ պիտի ելլէ:

— Ապրիլ 13 ին կիրակի օրը կէս օ-
րէն ետեւ՝ Բրուսիոյ դեսպանատան
երէց Պ. Շքլթմանին վրայ գաղանա-
կան յարձակումներ մը եղաւ, որ շատ
գէշ հետեւանքներ կրնար ունենալ:
Պ. Շքլթման իր մէկ հայրենակցին
հետ Բանիալի կողմերը պարտելու
գաղտն ըլլալով, ետ դառնալուն Աւ-
րուպիի կերպարանքով չորս ձիաւոր
գէյմը կ'ըլլէն հետեւին ձիաւոր մը ու-
նենալով:

Այսինքն մէկը հետեւանքներու հա-
մար շինուած մայթէն (գալարըմ) վար
իջնալու պարտաւորուելով, ձին աղէկ
չի կրնալ քշելով՝ կենդանիին հետ մէկ
տեղ կործանեցաւ:

Հաւանականաբար խմած ըլլալով
ու իր ձախորդութեան համար վրէժ
առնելու մէկը վնասուելով Պ. Շքլթ-
մանին վրայ կը յարձակի, որ իր հանգարտ
հեղ և չափաւոր բնաւորութեամբը
ամենուն սիրելի եղած պատաւաւոր
մարդ մըն է, և իր ընկերներուն օգ-
նութեամբը զանի ծեծելով գլուխը չա-
րաչար կը վիրաւորէ:

Այսինքն յանդուգն չարութիւն մը
անպատիժ չի մնալ ամենուն փափաքե-
լի է իւրաքանչիւրոյ անձնական ապա-
հովութեանը համար: Ուստի կը յու-
սացուի, որ տեղւոյն տեսչութեանը և
Բրուսիոյ դեսպանատան գործակցու-
թեամբ այս չարագործութեան հե-
ղինալը կը դառնուի և ձի նստելու ճամ-
բան սուրկելով՝ ասկէց ետքը իր ձա-
խորդութեան վրէժը անմեղ մարդոյմէ
առնելէ կ'ըզուշտայ:

— Պաշիքէն ապրիլ 10 թուական
նով կը գրեն:

«Ինչհանրական ատենին նիստը
ամսոյս 5 ին սկսաւ:

«Տաւալի դիպուած մը քաղաքիս
մէջ մեծ տխրութիւն պատճառեց:
(Օթն) Թագաւորին բանակի օգնական
Պ. Սամի Սիւլային, որ քանի մը օրէ
ի վեր հոս եկած էր իւր կնոյն աղ-
գականքը տեսնելու, ձիէն ինկաւ:
Ինկած ատենը ձախաւոր վիրաւորեցաւ,
որ առաջ շատ ծանր չէր երեւար, բայց
ետքը հիւանդութիւնը ուղեղին հա-
ղորդուելով, բժշկաց բոլոր ջանքերը
անօգուտ եղան: Պ. Սամի Սիւլայի
մեռաւ ու ապրիլ 5 ին թաղուեցաւ:

Տասնը հինգ օրէ ի վեր օգը շատ
գէշցաւ և ստատիկ ձմեռուան մը մէջ
ենք: Անձրեւ, ձիւն, մրիկալեցու պաղ
հովեր, անընդհատ կը շարունակին:

— Վառնայէն կը գրեն ապրիլ 14
թուականով:

«Երկու ամիսէ ի վեր՝ օգը շատ
փոփոխական է. ձիւն, անձրեւ, ցուրտ
հով, եւայլն փոփոխակի կը շարունա-
կին և մինչեւ հիմայ դեռ պայմաւ օր-
ուան մը երեսը տեսած չենք: Տօղ-
րօձայի դաշտերուն մէջ այս տարի կեն-
դանեաց մեծ կատարած կայ, խոտ,
գարի, ևն չըլլալուն: Առաջ մեծ կեն-
դաններուն մէջ սկսեալ մահը ինչ-
պէս են ձի, եղն, կով, և ետքն ալ օգ-
խորհրդներուն մէջ: Անց կենդանիներուն
կէսը և ոչխարներուն երեք մասին մե-
կը կորան:

Բիւնթէնէի և Մանկալիայի մէջ
շարքը խիստ մեծ եղաւ, տղքատ գե-
ղացիներն ու հովիւները վերջին խեղ-
ճութեան ու յուսահատութեան մէջ
ինկան: Վերջապէս Տօղրօձայի բանը
ընկաւ և շատ տարիներ ինքզինքը չի
պիտի կրնայ գտնալ, թէ որ կառավա-
րութիւնը օգնութեան չի հասնի:

— Օմիւսիոյ մեր յարգի թղթակի
ցը ապրիլ 18 թուով գրած նամակին
մէջ հետեւեալ ուրախաւիթ ըւերը
կուտայ:

«Երկարտուի բարձրադատիւ փո-
խարքային քանի մը տարիէ ի վեր ձա-
ռայութեան մէջ գտնուող մեր երկու-

Հայազգի հայրենակիցները՝ ազնուազարմ Ստեփանն աղա Մարտիրոսյան և յարգաւոր Ստեփանն աղա Ս. Գառնարեան և իրենց հաւատարիմ և իմաստուն աշխատութեանց փոխարէն՝ հազարապետութեան աստիճանն առնելու արժանացան, որոնց բարձրագոյն փոխարէն բարեհաճեր է շնորհելու նոյն աստիճանին վերաբերեալ պատուոյ նշանները:

Գաղթը է ինծի ասանի բերկրաւան լուրերը հազարէր Զեր ընտիր լըբաբերին, որուն միջոցաւ մեր հայազգի ուրիշ երիտասարդներն ալ որոնք թէ մեր տէրունէ և թէ ուրիշ տէրունէ անց ծառայութեանը մէջ կը գտնուին, իրարոյս կ'առնեն հաւատարմութեամբ, իմաստութեամբ և խոհեմութեամբ զանազան բարձր աստիճաններու ու պատիւներու արժանաւորը յուրախութիւն սրտի ճշմարիտ ազգասիրաց:

Սենք ալ որովհետեւ մեր յարգի թղթակիցը մեղե բան չէ թողուցեր ըսելու, մեր անկեղծ ինդակցութիւնը նուիրելով յիշեալ երկու մեծարարական ֆարգեւեաց, աւելի մեծ յառաջագի մութիւններ և աստիճաններ կը բարեմաղթենք, որ իրենց ծանուցեալ ազգասիրութեամբ և հանճարով ազգերեւու երեւելի ինսամակներ, բարբարներ և պարճանքներ ըլլալով, իրենց պատուական անունը լըբաբիս մէջ պարճանք յիշատակելու ստեպ առ ի թ ունենանք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՍԿԶԵՈՒՆՔ

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

1. Սաննի վաճառականութեան: 2. Օրագրութիւն վաճառականութեան: 3. Ինքնակառու վաճառականութեան աղբյուրներ: 4. Օրագրութիւն վաճառականաց և անոնց արտադրութեան հաստատագր. նպաստը:

1. Վաճառականութիւնը վաճառաց փոխանակութիւնն է: Սեր լըբաբերին ասեպոր բառը խիստ աղէկ յարմարած է այս արհեստին, որով մարդկային շարաարութեան այս ընդարձակ մասին գրեթէ բոլոր գործողութիւնները կը հասկնան:

2. Վաճառականութիւնը ի սկզբնական անոյ աշխարհի մէջ սահմանուած ըլլալով՝ ամեն աղբ կը վայելն ու կ'ընդունին. վաճառականութիւնը մարդուս իր բնութեանն ու իր բնական և քաղաքական վիճակին հարկէն (իթիւր զայ) ծագած ըլլալուն թէ և դրսէն վիայութիւններ ալ չունենանք, բնականաբար կրնանք հետեւեցունել, որ անիկայ մարդկային ընկերութեայ հետ սկիզբ առած է: Սարգիկ կարողութեամբ, յօժարութեամբ, կրթութիւնը ու վիճակաւ իրարմէ շատ տարբեր են: Այս տարբերութիւնը պատճառ եղած է, որ ամեն մարդ մէյմէկ զատ արհեստի ու մի և նոյն արհեստէ եղող մարդիկ մէյմէկ զատ գործի ետեւէ ըլլալով՝ ամեն մարդ իր արհեստին մէջ աւելի շարալիւթութիւն, գիւրութիւն ու յաջողակութիւն ստացած է, որով ալ ամեն արհեստի հաստատածները աւժան լու ու առատ եղած են. անանկ որ, ամեն մարդ տեսնելով որ իր հատուած բերքերը իրեն պէտք եղածէն աւելի են, սկսեալ է այն աւելի մասը իր ընկերին աւելորդ ու միանգամայն ալ իրեն պէտք եղած ուրիշ բերքի մը հետ փոխանակել: Այս ասանկալ սկսեր է վաճառականութիւնը: Այսքանի որ ընկերութիւնները զարգացեր գործերը աւելի մանր մասերու բաժնուեր ու

կրթութիւնը, քաղաքականութիւնը մարդոյս պիտոյքը, վայելքը ու հաստատածները աւելի առատ ու բազմազան են ըրեր, վաճառականական կենցաղովու արհեստն ալ որ օրի աւելի զարգացեր ու տակաւին զարգանալով վայ է. վասն զի ան ալ մարդուս քաղաքականութեանը ու շարտարութեանը պէս սահման ու չափ չունի: Արդարեւ, վաճառականութիւնը ու շարտարութիւնը իրարու հետ աւանակ սերտ կերպով մը կապուած են, որ եթէ լըբա թէ նոր տեսակ մեքենայ մը հնարուեր կամ գործոց մէջ նոր բաժանուններ մը եղեր կամ նոր բերք մը հաստատած մը երեւան ելեր է՝ անշուշտ գիտցիր, որ անմիջապէս վաճառականութիւնն ալ համեմատաբար ընդարձակեր կամ վաճառականութեան նոր ճիւղ մը սահմանուեր է, կամ թէ որ լըբա, թէ ազգի մը մէջ վաճառականութիւնը նոր տեսակ զարգացում մը կամ ընդարձակութիւն ստացեր է, անշուշտ գիտցիր, որ այն ազգին շարտարութիւնն ալ նոյն չափով յառաջացեր է:

3. Վաճառականութեան մէկ տեսակին աղբեցութիւնը թէպէտ զատ զատ պիտի տեսնենք, բայց ընդհանրապէս ո՞վա՞ն ծառայողութիւնն է, որ ուրիշ ժողովուրդներու վրայ իբր օտարի՝ իբր թշնամի աչք չի նայել կը սորվեցընէ ազգաց, ասով է որ մարդիկ կը հասկնան թէ իրենց ամենուն շահը մէկ է, ասով է որ մարդիկ հաւատարմութեամբ և իրարու համար ու աշխատիլ կը սովորին, ու ծովերուն կատաղութեանը կրկններուն իրար տուութեանը ու երկիրներուն ժանն տուութեանը չի նայելով իրարու հետ հազարգակցիլ կը սովորին: Վաճառականութեան ոգւովն է, որ շարտարութիւնը իր մէջը անսպասելի աղբերներ կը գտնայ, բոլոր վտանգներն կը գիմանայ, բոլոր շփոթարուութեանց կը յաղթէ ու ամենուն աչք իրարարութեան արգիւնքը բոլոր աչք իրարհը կը շրջագայէ. վաճառականութիւնը ազնուական իրաւոյս մըն է աշխատասէր թէ անհատ մարդուն թէ ըման ազգի մը: Այն է, որ մարդիկ իրենց յօժարութեանը կը հետեւին, կարողութիւններն կը զարգացընեն ու կը կատարելագործեն, աղբիւ եւ անիւղով մը կը վառին, ամեն վայրէ կեան իրարու պիտոյք կ'իմանան, ու վերական կապերով կը միանան ու փոխարք շահերով կը կապուին (Սալէ փեւն - ինէ):

Սալէալը կէպէ-էալ ինով: Օ. Բ.

ԱՌԵՏՏՐԵԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, 18 ԱՊՐԻԼ ՄՈՒՏՔ

Վերջի շաբթուան մէջ առուտուրը դարձեալ թուէ. կատարուած պիտան մեծ վաճառքը (սաթը) 600 պարկ խահուէ, 2000 կնդր շաբար ու 100 պարկ պղպեղ էր: Խահիւն աղէկ տեսակին ու լըբ. գլ. շաբարին գինը քիչ մը բարձրացած էր: Արկեղէն խիտ քիչ բան վաճառուեցաւ: Աւտոգրէններն ամենը 20 տակառ աւագ (գալայ) ու 200 սիտուկ պոզպոտ (չէլիկ) ծախվեցաւ, առաջինը 680 էն 700 ու վերջինը 140 էն 145: Անգղիայ երկաթի զէններէն բնաւ բան չի ծախուեցաւ, որմէ արդէն 7-8000 կնդր աւանդ ունինք ու գիններն ալ այս օր 35 զուռուշի կը հասնին:

Սանաճը աղէկ ծախվեցաւ, թիւ 8-14 զուռուշ 12 1/2 ու 12-20 զուռ-

ուռ 13 1/2 գիներով:

Ե. Լ. Բ.

25. Երեւանի մէջ այս հեղանիւթէն գրեթէ բնաւ բան չի մնաց, եւ կաններուն ամենն ալ վաճառուեցան 15.000 հոխայի չափ: Այլալի և Սիտիւթի տեսակէն կալացի ու իպրայիի համար ծախուեցաւ դրամաթղթով, 6 1/2 էն 6 1/2 25.000 հոխանոց ուրիշ մասով ալ 21 օրով ծախուեցաւ նոյնպէս դրամաթղթով:

Երայի տեսակը ամեն օր Էմաֆին ծախվեցաւ կանխիկ դրամաթղթերով. 6 3/4 18.000 հոխա մաս մը Վ օրի տեսակէն ծախուեցաւ Օտեսայի համար 6 3/4 գինով, վճարելի 31 օրէն:

ՕճԱՌ: Ամեն օր Էմաֆին կը ծախուեր քիչ քիչ. Բանդախնը 3 1/2, Բանդախնը 4 1/2, ու Սիտիւթի չորը 3 3/4 էն 4 զուռուշ:

ԱՐՄՏԻՔ: Լըբապէն եկած անյաջող լըբերուն նայելով և աղէկ տեսակ ապրանքին գնոյն հոս բարձրութեանը նայելով՝ այս շաբթու բնաւ առուտուր չեղաւ, ոչ միջերկրականի ոչ լըբ. զիւր և ոչ ալ ուրիշ կողմերուն համար, միայն Բունատանի համար 40.000 գրիւ ծախվեցաւ ու 30.000 գրիւ ալ տեղական սպառման, Սարմալայի ծովածոցին և Արշակունիի համար, հետեւեալ գիներով:

Արտիկ	Կարճ	Չորեն	Զուռուշ
Չիչաթի	"	"	22 -- 22 1/2
Բուռնի	"	"	21 1/2 22
Բուռնի	"	"	19 -- 19 1/2
Կալացի	"	"	20 -- 20 1/2
Օտեսայի	"	"	20 1/2 21
Իպրայիի կալուզ	"	"	14 -- 14 1/2
Կալացի	"	"	18 -- 18 1/2
Բուռնի	"	"	17 1/2 18
Բուռնիի կալուզ	"	"	12 1/2 13
Չիչաթի	"	"	15 1/2 14
Իպրայիի գալի	"	"	9 -- 9 1/2
Աշարայ (շալար) իպրայի	"	"	12 -- 12 1/2
Արտիկ (Եւրոպի)	"	"	7 -- 7 1/2

Այսօր վաճառը գտնուած բոլոր արմիրն այս է. 70.000 գրիւ կարճրցութիւն, 20.000 կալուզ ու 20.000 գրիւ գարի:

ԴԱՄՈՑ ԱՐՄԱՆՈՒԹԻՒՆԸ 18 ԱՊՐԻԼ

ՏՈՒՊԸՆ	Հիշեցողով
ՍՈՒՊԸՆ	372
ՍՈՒՊԸՆ	25-10
ԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ	24-8
ՄԱՃԱՌ	53-20
ԲԵՆԸՄԻՏ	55-20
ՈՍԿԻ 20 ՔԲ.	95
ԱՐՄԱՌ 5 "	22-14
ՓՈԼ ԽՈՒՄԻՆԱԼ	96-10
ԲԱՐՊՈՎԱՆՑ	18-20
ԼԻՐԱՑ ՍՈՒՊԸՆ	118-20
ՍՈՒՊԸՆ	163
ՅՈՒՆՅԻԿ	3-34
ՏԱՃԿԻ ԼԻՐԱՑ	110

Թրամաթուղթ շահը առնուած զեղը 3%, շահը վրան զեղը 1 1/2: 20 նոյ սկիի 1000ը զուռուշ 67 -- արծաթ 1000 զուռուշ 58:

ԲԱՆԸՍԻՐԵԿԱՆ

ՆՈՐԱԳԻՏ

ՀԱՅԵՐԵՆ ՄԱՏԵԱՆ ՄԸ

Վերջի տարիներու ազգային հաւգիտական գիւտերէն Սերէոս (բուռն լըբաբերոս) անուն հայ մատենագիր մը ծանցանք: Այս գիւտը շատ շուտով ամենուն մտադրութիւնը գրգռեց ու գրագէտը դեռ աս յուզման մէջ էն: Աւանձին ու պառնջին տղադրութեամբ հայերէնախոս ուսումնասիրաց հաղորդուած չհաղորդուած՝ նոյնը գաղղիա-

կան թարգմանութիւն Բոսպորոսի ծովերէն եւրոպական բանասիրութեան ընծայ կ'երթայ:

Այսչափ ընդհանուր մտադրութիւն գրգռուելուն հիմը՝ նոյն իսկ յիշեալ մատենին որակութիւնն է: Այսինքն՝ որ աս գիւտով ընդհանրապէս պատմական մատենագրութիւնն է՝ որ աւանկ բաւական նշանաւոր յաւելուած մը ընդունելով կը ծննանայ: Թէ որ առջեւի մատենին կամ շարտարութեան և կամ փիլիսոփայական գրութիւն մը ըլլար, ուսումնական հասարակութեան մէջ ոչ այսչափ ընդհանրական և ոչ այսչափ շահախնդիր հետաքրքրութիւն կ'երեւար: Այս լիկերոնի կորուսած գրութիւններէն մէկ քանին (օրինակի աղագաւ՝ տէ Բէֆուպիւր գիրքը) գտնուելով կամ Փիլիպի գեռ ըստ սկզբնագրին չի գտնուած գրուածներուն հայերէն թարգմանութեան մէջ պահուելով՝ կրկին թարգմանութեամբ հասարակաց ծանօթ ըլլալով՝ փոքր գիւտեր չէին, բայց ով կրնար համեմատել ան հետեւութիւն ունեցող շահաւոր գիւտերուն հետ որով նոյն իսկ Վիտն Վասիլոսի քանի մը հատախոտորներն աւելի ունեցանք, ու դարձեալ՝ հայերէն թարգմանութեան մէջ լըբաբերոսի Բոնիկոնին ամբողջ օրինակը ձեռք բերինք:

Այս գտնատանը՝ որն որ ուսումնականութիւնն առանց երկար խորհրդաւորութեան բնական գրգռման մը կը կատարէ, առողջ հիման վրայ է: Թէ արուեստն ու թէ տեսողականութիւնը (սիւքիւլատիս) կը յուսայ ան ձեռքը չունեցած գրքերուն շարտարական կամ փիլիսոփայական շահը և մտածութիւնը՝ երբ որ ըլլայ գտնելով թէ որ արդէն գտած ալ չըլլայ: Այս անհրաժեշտ առնականութիւնը կամ ամենատարբեր գրքերով իրենք գրեթէ յոգնեցունելով՝ մի միայն անձանօթ դէպք մը պատմական վկայութեան անկախ ի յառաջագունէ գտնելու կարողութիւն կամ հաւանեցունելու ոյժ չունի:

Այս նոր մատենը շատերը՝ գոնէ նորութիւն հրապարակուած կրնան կարգաւ, բայց բնականապէս ամենքը ճիշդ յարգի որոշելու վիճակի մէջ չեն: Առաւել աւելի մատենաւոր պատմականութեան նկարագիրն ամենուն առհասարակ սիրոյթակը կը շարժէ, բայց պատմական անունն ամենուն համար նոյն նշանակութիւնը չունի: Այս ընթերցողը կարգ մը որ պատմութիւն լրանուն պէտ՝ կը մտածեն որ կարգան ու զուարճանան: Այսինքն է՝ որ ասոնց համար աս գիրքը շատ ցամաք ու աննշանակ է: Այս միանգամայն ան կարգի ընթերցողներէն՝ որոնք անակական մտածութեան ազատ գտնուելով՝ որ և ինչ չոր և ցամաք դէպքերը յարգել ու քննութեան տակ ձգել կը սիրեն, շատերը՝ մանաւանդ ի սկզբան ինքնագրի ներքին քննութիւն մը ընելու կամ ժամանակ կամ բաւականութիւն չունենալով՝ միայն արտաքին յափշտակութեամբ (անթուգիտով) մը շափէն աւելի յարգ ու արժանիք կուտան: Ինականապէս մատենին ներքին յարգը առջիններուն չի հարցուիր, վերջիններուն գաղափարներն ալ չի վերաբերուիր: Ամեն ճշմարիտ ըմբռնում սիրող միտքեր իրենք իրենց աս հարցունքս կ'ընեն: Ա. Ի. Ն. է ան յարգը՝ որն որ թէ ընդհանուր ու թէ ազգային պատմական քննադատութեան (քրիթիկ) ներկայ յառաջացեալ վիճակը՝ աս գրքիս համար կ'որոշէ: Բ. Ի. Ն. յարգը կը սահմանէ հայերէն բանասիրութեան ներկայ առեանը:

Հատուածոյս գրիչը լըբաբերոս էր. բուն մէջ մանր քննութիւններու ու մանր ցուցումներու ձեռք չընկնելով՝

